

եւ անգլիարնակ էր: Ան թէ՛ Անգլիա եւ թէ՛ Վիրճինիա թողուցած է շարք մը վաւերաթուղթեր, պաշտօնագրեր, եւ զբաղած է եղեր ծխախոտի առեւտուրով:

1656-ին, Դեկտեմբերին, Վիրճինիայի Ծերակոյտը հետեւեալ որոշումը կ'անցընէ.

«Հայ Գէորգին (George the Armenian) որպէս քաջակերութիւն որ շարունակէ մետաքսաբուծութիւնը եւ մնայ երկրին (Վիրճինիայի) մէջ, Ծերակոյտը 4,000 փառնտ ծխախոտ կուտայ անոր»:1)

Ո՞վ էր այս Գէորգ կամ Գրիգոր Հայը, յայտնի չէ: Գուցէ ըլլայ մէկը այն երկու հայերէն, որոնք 1653-ին Թուրքիայէն Վիրճինիա բերուած էին էտուարա Տիկսէ: Գոնէ այդպէս կը կարծուի՝ առանց որոշ տուեալի:

«Ծերակոյտը, որպէսզի հաւանեցնէ Հայ Գէորգը, որ հաւանաբար մէկն էր այն երկու մարդոցմէն, որոնք Վիրճինիա բերուած էին Տիկսի կողմէ, Գաղթավայրին մէջ մնալու, եւ ինքզինքնին մետաքսի արտադրութեան նուիրելու, տուաւ անոր չորս հազար փառնտ ծխախոտ»:2)

Եթէ Գէորգ մէկն էր այդ երկու հայերէն, արդեօք ի՞նչ եղաւ իր ընկերը, կամ ի՞նչու Գէորգ, այս հեռաւոր երկիրը դալէն երեք տարի վերջ, կ'որոշէ մեկնիլ, քանի որ այդ կրնար ըլլալ միակ պատճառը, որ Ծերակոյտը անոր երկրէն չհեռանալը պայման կը դնէր իր որոշման մէջ: Գժբախտաբար, այս եւ անոր նման ուրիշ կարեւոր եւ հետաքրքրական հարցեր անպատասխան կը մնան այժմ:

Գէորգ հաւանաբար իր յարաբերութիւնը իր բնիկ երկրին հետ պահած էր: Այլապէս իմաստ չպիտի ունենար 4,000 փառնտ ծխախոտ անոր պարգև կամ վարձք ստանալը: Այդ ծրարախոտը ոչ երկրի մէջ եւ ոչ ալ Անգլիա չահարեր ապրանք էր: Նոյն ատեն Ժե. դարուն Մերձաւոր Արեւելքի մէջ ծխելը սկսած էր տարածուիլ, եւ ծխախոտը, բնիկ արտադրութիւն ըլլալով Վիրճինիայի, հաւանաբար Գէորգ չա-

հարեր նկատած էր ստանալ այս չորս հազար փառնտ ծխախոտը եւ Թուրքիա զրկել: Այսպէս, գուցէ երբ հայեր Վիրճինիայի մետաքսը կը վարդայնէին, նոյն ատեն ալ Թուրքիա ծրարախոտ կը զրկէին, որուն սկզբնական մշակոյթին մէջ ալ մեծ դեր մը ունեցած ըլլալու են, քանի որ հետզհետէ եւ մեր օրերուն թրքական ծխախոտը համաշխարհային համբաւ չահեցաւ:

Ուրիշ առթիւ դարձեալ առիթ կ'ունենամ աւելի զբաղելու առեւտուրին եւ մշակոյթին մէջ հայոց կատարած կարեւոր դերով:

\* \* \*

Այսպէս կ'աւարտեմ այս ուսումնասիրութիւնս: Սպասիչ չէ ան եւ ոչ ալ համապարփակ, սակայն ցոյց կուտայ, որ անձնական համեստ ջանքերով իսկ կարելի է ճաշակ մը տալ այն ընդարձակածաւալ նիւթի մասին, որ հայ վաճառականութեան ընդհանուր պատմութիւնն է:

Հում մետաքսի հայ վաճառականութեան այս աշխատութիւնս, աւելորդ է ըսել, բազմաձայնս գործ է թէ՛ խմբագրուելու եւ թէ՛ հրատարակուելու համար: Որով՝ արդար չէ ատիկա ակնկալել՝ որեւէ կատարելութեամբ՝ անհատէ մը: Նոյն ատեն բնական է, որ անվարձք պատրաստուած այս աշխատութիւնը, կամ ասոր նման ուրիշներ, մեր մօտ նոյնիսկ ընթերցողներ ունենալու բարոյական վարձքէն զրկուած են: Ուրեմն, կ'աւարտեմ գործս, առանց որեւէ ակնկալութիւն ունեցած ըլլալու, առանց որեւէ հատուցման, նոյնիսկ առանց որեւէ յոյսի թէ՛ ընթերցողներ իսկ պիտի ունենամ: Միայն կարեւոր գործ մը, պարտականութիւն մը գոհացուցիչ կերպով կատարած ըլլալու գոհունակութեամբ է, որ կը դնեմ վերջակէտը:

Դժուարութիւնը ոչ միայն ասոր նման նիւթեր խմբագրելուն մէջ է, այլ ե՛ւ ասոր հրատարակիչ գտնելուն մէջ: Եւ իբրեւ «հայէ հասկցող ինձ համար անկարելի է, որ սրտազին եւ խորունկ շնորհակալութիւններս չյայտնեմ «Հայրենիք» ամսագրի խմբագրութեան, որ իր ժողովրդական ամսագրին էջերը այնքան հիւրընկալ կերպով տրամադրեց այս երկա-

1) Henning's Statues, Vol. I, p. 425:

2) Econ. Hist. of Virginia, Vol. I, p.